



4(327)
22.02.2013
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Հանաչել գիտնականություն և գիտություն, իմանալ գրանց հանձնարոյ

ԼՍԱՐԱՐ

Лусарар ●

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

● Lusarar

ՓԵՏՐՎԱՐԸ` ԶԱՐԹՈՆԵՔԻ ԵՎ ՄԻԱՏՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԳԱՆԻՇ

Փետրվար ամիսը հայ ժողովրդի և հատկապես արցախցիների համար ունի պատմարժեք նշանակություն: Այն իրավամբ համարվում է ազգային զարթոնքի ամիս` հիմքում ունենալով այն փաստը, որ 1988-ի փետրվարին սկիզբ առավ համազգային պայքարը հանուն ազատության: Փետրվարի 13-ին Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում մեկնարկած ընդվզման կիզակետը թերևս փետրվարի 20-ն էր, երբ ժողովրդի բյուրձայն խրախուսանքով ու պահանջով ԼՂԻՄ մարզխորհրդի պատգամավորները որոշում ընդունեցին Ադրբեջանից անջատվելու մասին: Մայր Հայաստանին վերամիավորվելու պահանջը թե իրավական և թե բարոյահոգեբանական առումներով հիմնավորված էր: Խորհրդային սահմանադրությունը ինքնավար կազմավորումներին ազատ ինքնորոշվելու հնարավորություն տալիս էր, սակայն արցախցիների իրավունքը միութենական իշխանությունների կողմից անտեսվեց: Ըստ երևույթին, Կրեմլի մտավախությունը տարածքի վերածնունդն անխաղաղ ստեղծելու էր, թեպետ մինչ այդ ԽՍՀՄ-ում տարածքային փոփոխություններ արդեն իսկ եղել էին, ինչպես օրինակ` ՌԽՖՍՀ կազմում գտնվող Գրինլանդ 1954 թվականին Ուկրաինային հանձնելը: Այնուամենայն էր, որ Խորհրդային Միությունը չէր ուզում երկրի վարչատարածքային քարտեզը ենթարկել ներքին սահմանային փոփոխությունների: Եվ գուցե թե հենց Դարաբաղի հիմնախնդիրը չլուծելը պատճառ դարձավ իսկա կայսրության փլուզման:

Իրականում այն է, որ միութենական իշխանությունները փոխանակ գեղարվեստ երկրում հատկապես լեռնային խնդիրների լուծմամբ, ձեռնամուխ եղան էր լեռնային բախումներ հրահրելու: Դարաբաղից բացի, ի հայտ եկավ նաև Ֆերգանան, մեջտեղ քաշվեց գազաուղների խնդիրը... Դա էր ազգերի ինքնորոշման լեռնային մեթոդը, որով տասնամյակներ շարունակ հնազանդեցնում էին խորհրդային ազգերին: Բայց ինչքան էլ երկիրը հզոր, միևնույն է, ամենար էր ժողովուրդներին երկար պահել բանտարկված վիճակում, և խորհրդային ինտերնացիոնալիզմը ի վերջո ճաք տվեց: Պատահական չէր նաև, որ ԼՂԻՄ 20-րդ գումարման խորհրդի նստաշրջանի հայտնի որոշումից ընդամենը երկու օր անց, փետրվարի 22-ին, շուրջ 80-հազարանոց ազերական խառնամբոխը Ադրբեջանից զինված հարձակվեց Ասկերան ավանի վրա: Ընդհանրապես հայտնի գոգնությունը ու քաջարությունը, հարձակումը ետ մղվեց, և ազերի ելուզակները նահանջեցին զոհեր տալով:

Դա ընդամենը սկիզբն էր. մի քանի օր անց` փետրվարի 26-29-ը, իսկական մահիճի իրականացվեց Սունդայի քաղաքում: Հայերի նկատմամբ բռնություններն ու վայրագությունները հազիվ թե առանց Մոսկվայի թողտվության էին: Կար «հայերին դաս տալու» հստակ ծրագիր, և դրանում ընդգրկված էին նաև քրեական տարրերը: Սունդայի ինտենսիվ Կիովաբադը, Շամախին, Բաքուն... Բռնատեղահանվեց Ադրբեջանում ապրող հայությունը, որից հետո հերթը հասավ Դարաբաղին:

Իսկ Դարաբաղն արդեն ոտքի էր կանգնել` պատրաստ կենաց ու մահու կռվի: Արցախցիների մարտական դրոշմը, կարելի է ասել, փետրվարի ոգին էր: Հետաքրքիր գուգադիպությանը, դարձյալ փետրվարին, տեղի ունեցավ խոջալուի ռազմաբազայի ոչնչացումը: 1992 թվականի փետրվարի 26-ին հայ քաջորդիների ձեռնարկած այդ փայլուն ռազմագործողությունը կարևոր ստրատեգիական նշանակություն ունեցավ հետագա ինքնապաշտպանական գործողությունների կազմակերպման համար, ոգեշնչեց ու նոր սխրանքների մղեց մեր ազատամարտիկներին:

Տասնամյակներ, թե հարյուրամյակներ անցնեն` փետրվարը հայ ժողովրդի համար մնալու է իբրև ազգային զարթոնքը խորհրդանշող ամիս, որի առանցքը ազգի միասնությունն է: Այդ առանցքի վրա պիտի միշտ մնա մեր ազգային գաղափարաբանությունը:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԵՐԿԻՐԸ ԵՎ ԻՐ ԶԱՎԱԿՆԵՐԸ



Լուսանկարը Վ. Պետրոսյանի

Եղել ենք մենք հնուց ի վեր այս երկրում ու կանց: Կանք ու կլինենք հաստատապես: Հայի վճիռ: Վճիռ` լինելու, հավիտենապես լինելու... Լինելու մի երկրում, որ իրենն է և լինելու է ընդմիշտ, որ հավերժ ինքը` հայը և նրա երկիրը` Լեռնային Դարաբաղը, Արցախահողը` պատմական Հայաստանի 10-րդ նահանգը: Եվ ինչու չլինի, եթե կա` լինելու հավիտյանս: Քանզի կա կամք, ուժ, վճռականություն:

Եվ կա իր 25-ամյա պայքարով, իր ազատաբաժնի երկրով, իր ազատաբեր գավալներով: Կա, քանզի կա իր անհերքելի ճշմարտությանը, որ սա մեր երկիրն է` Արցախը, Հայաստանը, հայ ժողովուրդը: Եվ` «սա Հայաստան է` ու վերջ»:

Վերջ թշնամիներին, վերջ ազերիներին, վերջ ոտնձգություններին, սարսափին, սպառնալիքներին... Վերջ, որի սկիզբը թափ առավ 1988թ. փետրվարին...

Խաղաղ ցույցեր, արդար պահանջատիրություն:

Ստեփանակերտ, 20 փետրվարի, 88 թվական: Մեծ հանրաքվե: Ժողովրդի միասնական կամքի դրսևորում: Վճռական որոշման կայացում, ինքնորոշում, սեփական ճակատագրի ինքնուրույն տնօրինում: Ինքնահաստատում: Համայն մի ժողովրդի բռնազրկված կամքի դրսևորում: Լեռնային Դարաբաղի մարզխորհրդի պատմական նիստը Արցախ երկրին ազդարարում է իր վճիռը` ժողովրդի պահանջը` Ադրբեջանի բռնատիրությունից ազատվելու իր ազատականությունը: Հանրապետության իրավաբանական դարձել էր ուխտատեղի, որտեղ մեկտեղվում էին արցախահայության միտքը, կամքը, հոգին, իղձը` դառնալ ինքնորոշ, անկախ, տնօրինել սեփական ճակատագիրը: Երկիրը չէր ընկրկում ցուրտ սառնամանիքներից, իրեն երկարատև (70 տարի) խեղդ-կեղծեղծ ոտնահարումներից, այլ հավաքական ուժով խմորում էր իր պայքարը, և բոլորը մի` էին:

Եվ համախմբվեցին արցախահայությունն ու ողջ հայությունը, ու սկսվեց Մեծ Շարժումը, որ վերջին հարյուրամյակի հայ ժողովրդի պատմության վառ էջն է, ու բնորոշվեց հստակ ձևակերպմամբ` Արցախյան ազատագրական շարժում-88: Սկսվեց նոր գոյի պայքար, պայքար հանուն մեր հիմքերի ամրապնդման, հանուն հայոց երկրի պաշտպանականության:

Ձիմվեց հայը, քանզի խաղաղ ցույցերը չհասան իրենց նպատակին: Ազերին ամեն տեղ` ամբողջ տարածաշրջանում դրել էր իր արյունոտ թաթը և սկսել մի տենդազիմ եղեռնագործություն` ամենուր հրահրելով ջարդ, ավեր, արյունահեղություն... Սկսվեց Մեծ գոյամարտ, և արցախցիները զենք վերցրեց հանուն իր հողի, իր երկրի ազատագրության: Շրջափակումը սպառնում էր երկրին բոլոր կողմերից, վտանգում նրա գոյատևումը: Սակայն հայի վճիռը մնում էր աներեր. նա հաղթահարում էր

ծանր փորձություն: Մեծ էր հացի խնդիրը, դժվարահարույց էր անգամ ջրի հայթայթումը: Մարդիկ ժամեր շարունակ սպասում էին իրենց հերթին` շատ անգամ դառնալով հրետակոծության զոհ: Շատ դեպքերում անգամ զինվորի աճյունը ըստ պատշաճի չէին կարողանում հողին հանձնել... Բազմաբնակարան շենքերի բնակիչներն ամիսներ շարունակ ապրում էին շենքերի նկուղներում` զուրկ տարրական պայմաններից: Բայց երկիրը չէր կորցնում իր կենսունակությունը: Մի կտոր հացը արցախցին կիսում էր ընկեր-բարեկամի, դրացու հետ: Բոլորը սատարում էին միմյանց, հուսադրում, գոտեպնդում:

Ձիմվորագրվեցին երկրի գավալները` նրանք, ովքեր ծաղկուն գարուններ պիտի ապրեին, իսկ մարտնչումը շատ անգամ դառնում էր օրհասական` արժենալով նրանցից շատերի դեռափոթ կյանքը: Առնականում` ահարկու, դաժան, կատարվում էր բոլոր ուղղություններով, հուժկու հակազորներով` կենաց և մահու: Հանուն հայրենի հողի ազատագրման միավորվել էին համայն հայության բոլոր ուժերը:

Մահ էր սփռում թշնամին` փորձելով ընկճել մեզ: Բնաջնջվում էին հայոց բնակավայրերը հրետանու, հրասայերի, արկերի և ռումբերի մահասփյուռ հարձակումներից: Բնավեր հավք էր դարձնում նենգ թշնամին մեզ դաժանորեն: Ամենուր հրկիզումներ, շեն գյուղերի, ավանների, շրջանների հրկիզումներ, մայրաքաղաքի ռմբակոծություն ու բնակչության բնաջնջման քստմեղի փաստեր: Վկան` Մարտիկայի կոտորածը...

Սակայն չհուսաբեկվեց հայ զինվորը, հայ մամիկը, հայ պատանին... Տոկունության մկրտություն ստացան բոլորը` զինվոր ու խաղաղ բնակիչ` մարտադաշտում և թիկունքում ցուցաբերելով անօրինակ արիություն: Ձիմվորը կոփվեց, համալրեց իր շարքերը, և կազմավորվեց Հայկական բանակը: Ճեղքվեց շրջափակումը: Օրհասը վերափոխվեց հաղթական գրոհների: Ձիմվորի սխրանքը փրկեց գոյատևումը: Մեկը մյուսին էին հաջորդում հաղթական մարտերը: Սկսվեցին բեկումնային գրոհներ, միմյանց էին հաջորդում վճռական ճակատամարտերը: Համաձույլ էին ճակատն ու թիկունքը. հանուն հայոց օջախների մեր քաջագուններն արյունաբերեցին թշնամուն վտարում էին հայրենի երկրի սահմաններից, ազատագրում մեր պայծառական հողերը:

Վերջ դրվեց մահաբեր պատերազմին: Միջազգային տերությունների միջամտությամբ կնքվեց զինադադար: Մերն է մեր բնօրրանը` պատմական հայոց երկիրը, որը դիմակայեց հետպատերազմյան բազմաթիվ դժվարությունների: Հացը, սուրբ հացը դրվում է սեղանին որպես օրհնյալ մատուցը: Ձիմվորը դարձավ շինական, շինարար:

Ազատագրական շարժման հաջորդ փուլը

տարածաշրջանի կայունության, անվտանգության ապահովումն է: Ծանր կորուստներից ու վերքերից ապաքինվում է երկիրը, գավալներն ակոսում են հայրենի հողը, որից ծիլ է տալիս կենարար հասկը: Ոռոգվում է հողը իր գավալների արդար քրտինքով:

Կյանքի են կոչվում մեծ ծրագրեր: Կրթական բնակավայրերը վերակենդանանում են մեծ ավյունով: Եվ հաղթանակած երկիրը համայն հայության միահամուռ ուժերով ձեռնամուխ է լինում մեծ վերազինման, սոցիալ-տնտեսական արմատական վերակառուցման: Երկիրը շենանում է, որն իրագործվում է մեր կառավարության ծրագրերով, համահայկական ուժերով, հոգածու բարերարների աջակցությամբ: Շոշափելի են սոցիալական տեղաշարժերը: Երկիրը գնահատում է իր գավալների հերոսական ջանքերը: Մարդիկ ստեղծում են կյանքի բարեկեցիկ պայմաններ, վերազինում հինը, հենքն ամրացնում ամուր կառույցներով, կյանքին մոտենում նոր հայեցակետով:

Շենանում են ավերված գյուղերը, նորանոր բնակավայրեր:

Քաղաքները հիմնովին վերափոխվում են, երիտասարդանում, մարդիկ սկսում են ապրել ավելի բարեկեցիկ պայմաններում: Կենցաղը դառնում է ավելի նպաստավոր: Նոր ընկալումներով են լուծվում իրատապ խնդիրները:

Սակայն դեռևս առկա են լուրջ սոցիալական խնդիրներ: Բոլորը չեն ապահովված աշխատատեղերով, կենսականորեն անհրաժեշտ պայմաններով: Դեռևս առկա է արտահոսքը դեպի արտերկիր: Դեռևս առկա են սոցիալական բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծումը հրատապ է:

Եվ, սակայն, տոկուն է երկիրը, պինդ են նրա գավալները: Վերակերտվում է երկիրը նրանց ջանքերով, նրանց կամքով, պահանջների իրականացման նոր մոտեցումներով: Արցախցին համառ է: Հաղթահարելով դժվարությունները` ստեղծում է նորը, արարում վաղվա օրվա համար... Անգամ հեռավոր գյուղում ապրող ձգտում է ունենալ համակարգիչ, կապվել հայրենակիցների և արտաքին աշխարհի հետ համացանցով և արբանյակային կապով: Եվ ինչու չէ, հենց նա է արարում, երկիրը պահում և շենացնում: Եվ բոլորս...

Մենք ենք մեր երկրի տերը` նախագահ ու իշխանավոր, մտավորական ու հոգևորական, զինվորական ու երկրապահ, բժիշկ ու մանկավարժ, շինարար ու շինական, որոնց գործունեությունն ամբողջանում է մի ընդհանուր նպատակով` շենացնել հայրենի երկիրը, տեր կանգնել նրա ձեռքբերումներին ու շարունակել արարել հանուն լուսավոր ապագայի... Չէ որ արցախցին հայի հազվագյուտ որակն է` ընդվզող ու վերակերտող, տոկացող ու հաղթանակող...

Եվ այսպիսի երկրով ու գավալներով դեռ շարունակվելու է կերտումը մեր երազանքի հայրենիքի, և 25 տարի անց` ժողովրդի զարթոնքի 50-ամյակին թերևս մենք, թերթերով մեր պատմության էջերը, կտեսնենք մեր հայրենիքի ոչ միայն մաքառման պատմությունը, այլ և պատմությունը փթթումի, բարգավաճման, հզոր հայրենիքի կերտման, և Արցախը կդառնա այն ավետյաջ երկիրը, որի գավալները կդառնան քաջագունների հետնորդները` նոր սերնդի մարդիկ, որ հերոսների իղձերը կյանքի կոչելով` երկիրը կհասցնեն իր հզորության բարձրակետին...

Թող օրհնյալ լինի այս երկիրը, որը մերն էր ի սկզբանե, կա ու կլինի հավիտյանս` նորոգ ու շեն իր քաջագուն, իր կենարար գավալների շնորհիվ:

Եվ թող հարատևի խաղաղությունը մեր երկրում...

Վարդիթեր ՀԱԿՈՅԱՆ
Շուշիի Խ.Արմյանի անվ. ինս.
դպրոցի հայոց լեզվի և գրակ.
ուսուցչուհի

ՄԵՂԻԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

«ԴԻՋԻԹԵՔ-2013»-ԻՆ՝ ԱՐՃԱՄԻ ՄԱՍՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Փետրվարի 4-9-ը Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում անցկացվեց «Դիջիթեք-2013» միջազգային ստուգատես՝ «Թվային միջոցների կիրառումը հանրակրթական գործընթացներում» թեմայով: Ստուգատեսին իրավունք ունեին մասնակցել աշակերտներ, ուսուցիչներ, անհատներ, կազմակերպություններ, որոնք կարող էին կրթական ծրագրեր ներկայացնել: Արցախից ներկայացել էին Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցի աշակերտները՝ տնօրեն Նազիկ Նալբանդյանի հետ միասին, Ստեփանակերտի Խ. 3 և Ասկերանի շրջանի Այգեստանի միջնակարգ դպրոցների աշակերտները՝ ԼՂԴ կրթության և գիտության փոխնախարար Միքայել Զամբարձումյանի գլխավորությամբ: Վերջինիս տեղեկատվությամբ՝ Շուշիի դպրոցականները ներկայացրել էին Շուշիի մասին ֆիլմ՝ Նոր տարվա թեմայով, Խ. 3 դպրոցի ներկայացուցիչները՝ իրենց դպրոցի կայքը, որտեղ զետեղված է դպրոցի պատմությունը, Այգեստանի դպրոցականները՝ խմբային



խաղ՝ ուսումնական թեմայով: Ստուգատեսին մի քանի գլխավոր մրցանակներ էին նախատեսված տարբեր անվանակարգերով, որոնցից մեկում՝ «Մեղիակրթության նորարարական նախագիծ», շահել է Այգեստանի թիմը: Նշենք, որ նրանց հաջողությունը պատահական չէ: Այգեստանի դպրոցականների հետ տեղում պարապմունքներ են անցկացրել և ծրագրավորման համակարգին ծանոթացրել «Ինստիգեյթ» կազմակերպության անդամները: Մյուս մասնակիցները խրախուսական մրցանակ են ստացել: Մ. Զամբարձումյանի խոսքով՝ նման մրցույթներն ինքնանպատակ չեն. մեղիակրթության նոր գործիքների կիրառումը դասապրոցեսին նպաստում են ուսուցման արդյունավետության բարձրացմանը: Ի դեպ, ԼՂԴ ԿԳ նախարարության և «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի համագործակցության ծրագրի շրջանակներում ամռանը

շուրջ 120 դասվարներ կրթահամալիրի մասնագետների կողմից վերապատրաստման դասընթացներ են անցել թվային միջոցները՝ դասապրոցեսում կիրառելու նպատակով, իսկ աշնանը՝ մեկ տասնյակ դասվարներ կրթահամալիրում գործնական պարապմունքների շնորհիվ ծանոթացել հայաստանյան գործընկերների փորձին: Գործընթացը շարունակական բնույթ է կրում: Ավելացնենք, որ սեբաստացիները բարեկամական սերտ կապ են ստեղծել Շուշիի Խ. Աբովյանի անվան դպրոցի հետ և փոխայցելություններ կատարել: «Դիջիթեք»-ին արցախցիները երկրորդ տարին են մասնակցում: Մ. Զամբարձումյանի խոսքով՝ նկատվում է առաջընթաց: Արցախցիներն անցած տարի խրախուսական մրցանակ են ստացել, իսկ այս տարի, ինչպես ասացինք, նաև՝ գլխավոր մրցանակներից մեկը:

Սեֆ. լրատվություն

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ «ՄՄԻԹԱՐ ՍԵՔԱՍԱՑԻ» ԿՐԹԱՆԱՄԱԼԻՐՈՒՄ

Հայ նորագույն պատմության ազգային-ազատագրական պայքարի Արցախյան շարժման 25-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում փետրվարի 4-9-ը Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցը մասնակցել է Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում կազմակերպված «Դիջիթեք-2013» միջազգային հանրակրթական ստուգատեսին:

պով օժտված մի այնպիսի սերունդ, որն ի վիճակի լինի պաշտպանելու և հզորացնելու հայրենիքը, դիմակայելու մեր մոլորակի վրա տեղի ունեցող տարաբնույթ ու հանկարծահաս փոփոխություններին: Մեր խնդիրն է պարտքի ու պատասխանատվության բարձր զգացումով սատարել մեր պետությանը՝ իր

բաստացի» կրթահամալիրի այս կարևոր, անհրաժեշտ ու օգտակար նախաձեռնությունը, որը նպատակ ունի ուսումնական գործընթացում խթանել թվային միջոցների արդյունավետ կիրառման փորձն ու ձեռքբերումները, թվային նոր գործիքների և հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրումը: Քանզի անհ-

ՀԱՄԱԿԱՐԳԻՉԸ ԿԵՆՍԱԲԱՆԻ ԱՉՔԵՐՈՎ

Եթե դու նույնիսկ մենակ ես, ոչ մի վատ բան մի խոսիր կամ արա: Սովորիր ավելի շատ ամաչել ինքդ թեզմից, բան ուրիշներից:

Դեմոկրիտ

Մեծ Դեմոկրիտն ի՞նչ իմանար, որ կզա մի ժամանակաշրջան, երբ կգերիշխեն բազմաբնույթ, բազմաֆունկցիոնալ տարբեր չափերի տարաբնույթ համակարգիչներ և մոբիլ հեռախոսներ: Ի՞նչ իմանար «խեղճ» Դեմոկրիտը, որ կստեղծվի մի համացանց՝ իր սարդոստայններով: Այն կներառի և՛ դեռահասներին, և՛ մանուկներին, և՛ չափահասներին, և՛ մեծերին, կառնի իր ճիրանների մեջ ու բաց չի թողնի:

Ի՞նչ իմանար Դեմոկրիտը, որ մինչ տառաճանաչ դառնալը թոթովախոս մանուկը կկարողանա մեծավարի օգտագործել համակարգիչը, կթողնի իր խաղերը, խաղալիքները և կխաղա վիրտուալ խաղեր, չի կարողանա հայացքը կտրել դիմացի էկրանից, որ բարի հեթիաքներին, նկարագրող գեղեցիկ, բովանդակալից գրքերին կփոխարինեն դաժան սյուժեներով մոլտերը: Իսկ երիտասարդ ծնողների մեծ մասը կհիանա իրենց մանուկների «իմացությամբ» կամ էլ անտարբեր կմնա այդ ֆոթոբայի նկատմամբ: Ամմիջական շփումը սեփական երեխաների և իրենց իսկ՝ ծնողների հետ նրանք էլ կփոխարինեն մոբիլ կապերով, համակարգիչի էկրաններով, ստեղծաշարի կտկոտոցով:

Ես չեմ բացառում համակարգիչ կարևորությունը: Քավ լիցի... Այն ժամանակակից կենսական կարևորություն ունեցող արքեսուար է, առանց որի անհնար է պատկերացնել մարդու գործունեության ցանկացած ոլորտ: Բայց համաձայնեք, անհրաժեշտ է ունենալ այն օգտագործելու մշակույթ: Համացանցային կյանքը մեզ մոտ ներթափանցել է վերջերս: Ամեն ինչի նորը կառուցվում է սխալների վրա: Բայց կան սխալներ, որոնք ճակատագրական են դառնում, և դրանք ուղղելը չի ստացվում: Ինչո՞ւ սեփական կաշվի վրա զգալ՝ հետո սթափվել:

Համակարգիչը լաբիրինթոսի մեջ է առնում երեխայի չհասունացած նյարդային համակարգը, նրան դարձնում սակավաշարժ, ժամանակը չգնահատող: Մենք՝ ուսուցիչներս, զգուշորեն պետք է մոտենանք նրանց՝ միշտ հաշվի առնելով, որ արգելված պտուղը գրավիչ է:

Իմ ուսումնառության տարիներին չարիք էր համարվում հեռուստացույցը: Անհրաժեշտ էր միշտ պահել հեռավորությունը, որ տեսողությունը չխանգարվեր: Տեսողական պրոբլեմները հազվադեպ էին մեր ժամանակներում, ինչը չկա ներկայումս: Յուրաքանչյուր դասարանի աշակերտների գրեթե կեսի մոտ նկատվում է տեսողության շեղումներ:

Այսօր հեռուստացույցն իր տեղը զիջել է համակարգիչին ու մոբիլ հեռախոսին: Մի կողմ թողնենք մաթեմատիկական հաշվումները (թե քանի ժամ են վատնում այդ սարքավորումներից օգտվելուն), նրանց դրական կողմն է օգտակար լինելը: Խոսենք վնասների մասին:

Ճառագայթների ազդեցությունից առաջանում են ուժեղ գլխացավեր, նյարդայնություն կամ դյուրագրգռություն: Մեծ փոփոխություններ են տեղի ունենում ողնաշարի հետ. կորա-



Երրորդ հազարամյակի շեմին ապացուցման կարիք չի զգում այն իրողությունը, որ յուրաքանչյուր ազգի զարգացման, գործունեության և մրցուցակության երաշխիքը նրա հոգևոր ու մտավոր ներուժի զարգացումն է: Ցավոք, հայության այս հարստությունը և տարացրիվ է, և նրա ինտելեկտը հնարավոր է միայն կրթության հիմքի վրա:

Մեր ժամանակները լավագույն պատեհություն են ընձեռել բուն հայկական կյանքի վերամիավորման, համազգային կրթական կառույցի ստեղծման համար: Հայ ժողովուրդն ապրում է իր բազմադարյան պատմության ամենաճակատագրական պահերից մեկը, և այն աստեղային դարձնելը կախված է նրանից, թե ինչպես կգործենք այսօր և ինչ հիմքեր ու նախադրյալներ կստեղծենք նրա հետագա զարգացման համար...

կարևորագույն նպատակին հասնելու համար: Եվ ամենաբարձր ու ամենավսեմ նվերը, որ կարող ենք առաջարկել մեր երկրին, լիարժեք կրթված ու դաստիարակված սերունդն է:

Պատվով կատարենք մեր առաքելությունը...

Հայտնի է, որ դպրոցի աշխատանքի արդյունքները որոշվում են մի շարք գործոններով, որոնցից մեկն էլ դպրոցի ղեկավարման գործոնն է՝ տնօրենի և նրա տեղակալների կազմակերպական ու մանկավարժական գործունեությունը, նրանց աշխատանքի ոճը: Բազմաթիվ փաստեր վկայում են, որ նույնիսկ փորձառու ուսուցիչների աշխատանքի մակարդակն է իջնում, երբ ապահովված չէ դպրոցի պատշաճ ղեկավարությունը և, հակառակը՝ հաջողության են հասնում այն մանկավարժական կոլեկտիվները, որոնց գլուխ կանգնած են այնպիսի ղեկավարներ, որ ընդունակ են մոբիլիզացնելու ուսուցիչների և աշակերտների կամքն ու ստեղծագործական ակտիվությունը դպրոցի առջև ծառայած խնդիրների հաջող իրականացման համար մղվող պայքարում:

Մենք ողջունում և զնախատում ենք Երևանի «Մխիթար Սե-

նար է պատկերացնել ժամանակակից դպրոցն առանց անհրաժեշտ տեխնիկական հագեցվածության: Հնարավորության սահմաններում անհրաժեշտ է դպրոցն ապահովել համակարգիչներով, ցանկալի է, որ դպրոցում մայրենիից հետո այն լինի երկրորդ լեզուն, երկրորդ գրագիտությունը:

Իգուր չէ ասված. «Այն ժողովուրդը, որը կկարողանա հնարավորինս լրիվ արագ ու կատարյալ տիրապետել մարդկության նորագույն գիտելիքներին և գարգացնել դրանք, ձեռք կբերի անհրաժեշտ հզորություն»:

Մեր պարագայում այն առավել ևս կարևորվում է երկրի առջև ծառայած գոյատևման, ժողովրդավարական ու քաղաքացիական հասարակության ձևավորման, համազգային կառույցների ստեղծման հրատապ խնդիրների հրամայականով:

Ժամանակակից հաղորդակցման նոր տեխնոլոգիաներին տիրապետելը կարևորվում է նաև մեզ պարտադրված պատերազմը շարունակելով այլ ոլորտում, այլ հարթությունում: Անտեսանելի այդ պատերազմն ավելի վտանգավոր է և շատ ծանր հետևանքներ կարող է ունենալ, քան մարտադաշտում:

Ն. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմն. դպրոցի տնօրեն
ԼՂԴ վաստակավոր մանկավարժ

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Արցախի պետական համալսարանի գրադարանի ֆոնդը հարստացավ մեծաքանակ, արժեքավոր գրականությամբ: Անվանի գրականագետ Լևոն Ասմարյանի անձնական գրադարանը՝ շուրջ 2350 կտոր գիրք՝ հիմնականում հունանիտար և մասնագիտական բնույթի, այդ թվում՝ իր հեղինակած գրքերը, որպես նվիրատվություն, հանձնվեց ԱրՊՀ-ին:

համալսարանի ղեկավարությունը, ուսանողներ: Ռեկտոր Ստեփան Դադայանը դասախոսական և ուսանողական կոլեկտիվների անունից շնորհակալություն հայտնեց արժեքավոր նվերի համար՝ վստահեցնելով, որ այն կնպաստի բուհի ուսումնական գործընթացի բարելավմանը, ուսանողների մտահորիզոնի զարգացմանը:

հորեղբոր՝ Լևոն Ասմարյանի կյանքն ու գործունեությունը, նշեց, որ երբ սկսվեց Դարաբաղյան շարժումը, նա առաջին իսկ օրերից զինվորագրվեց նրան՝ որպես նվիրյալ մտավորական: Իր մտերիմ ընկերների՝ Արցախ Բուհաթյանի, Լեոնիդ Ազգալոյանի և այլոց հետ միասին բավականին աշխատանք է տարել Դարաբաղյան շարժմանը օգտակար լինելու ուղղությամբ: Նա ներշնչ-

կենդանությունը, չունեն, ինչ՝ գրքերը: Գրքերի էջերից մարդկային կենսադաշտը փոխանցվում է նրանց թերթողին: Դրանք նաև Լևոն Ասմարյան մարդ-մտավորականի տեսակի մասին են խոսում: Անգամ 30-ական թվականների հրատարակություն կա նրա գրքերի ցանկում, երբ նա դեռ պատանի էր: Պատկերացնել կարելի է, թե ինչ ասել է գիրք գնել այն ժամանակ, երբ համատարած սով էր ու պատերազմ... Անկասկած, նա իր բերանից կտրելով է գրքեր է առել՝ տալով վերջին գունարը: Որովհետև նյութական, պարզ սովից ավելի կարևոր և ուժեղ է գիտելիքի սովը, որի նվիրյալ է եղել միշտ Լևոն Ասմարյանը: Մասնագիտությամբ բժիշկ նրա երիտասարդ զարմիկ Ա. Ասմարյանի հուզմունքը, փոխանցվեց նաև ներկայաներին, երբ նա ներկայացնում էր երջանակահիշատակ հորեղբորը՝ պատկերացնելով զտարյուն մտավորականին, գիտնականին, նվիրյալ քաղաքացուն: Եվ ավերորդ էր թվում երիտասարդի՝ ուսանողների ուղղված հորդորը՝ խնամքով վերաբերվել գրքերին, որպեսզի գալիք սերունդներն էլ կարողանան օգտվել և գործարանը կատարի իր առաքելությունը: Բանասիրական ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողուհու խոսքը հենց նույն այս միտքն էր շեշտադրում:



Միասնական հայրենիք» հասարակական կազմակերպության ղեկավար Վլադիմիր Պողոսյանը, ունի միջոցով կազմակերպվեց ակցիան, տեղեկացրեց, որ կազմակերպությունը բազմաթիվ ծրագրեր ու նախաձեռնություններ է իրականացրել ԳՀ-ում, Արցախում, Սփյուռքում: «Նվիրատվությունը լավ առիթ է՝ նորից լինել Արցախում և մեր փոքր լուսնային նվիրաբերել Արցախի ժողովրդի պայքարին»,- ասաց նա՝ ավելացնելով, որ մեծ նախաձեռնությունը շարունակված կլինի: Նա շնորհակալություն հայտնեց գործընկերներին՝ ի դեմս Ստեփանակերտի կոնյակի գործարանի տնօրեն Ռուսլան Իսրայելյանի, որն օգնեց գրականությունը Արցախ հասցնելու:

«Միասնական հայրենիք» հասարակական կազմակերպության ղեկավար Վլադիմիր Պողոսյանը, ունի միջոցով կազմակերպվեց ակցիան, տեղեկացրեց, որ կազմակերպությունը բազմաթիվ ծրագրեր ու նախաձեռնություններ է իրականացրել ԳՀ-ում, Արցախում, Սփյուռքում: «Նվիրատվությունը լավ առիթ է՝ նորից լինել Արցախում և մեր փոքր լուսնային նվիրաբերել Արցախի ժողովրդի պայքարին»,- ասաց նա՝ ավելացնելով, որ մեծ նախաձեռնությունը շարունակված կլինի: Նա շնորհակալություն հայտնեց գործընկերներին՝ ի դեմս Ստեփանակերտի կոնյակի գործարանի տնօրեն Ռուսլան Իսրայելյանի, որն օգնեց գրականությունը Արցախ հասցնելու:

ված է եղել Արցախով, նրա կյանքը լցված էր նրան սատար լինելու կամքով: Հանկարծակի վախճանվեց և չհասցրեց իր ամենարժեքավոր ժառանգության/նա սեփական ընտանիք չունեի/ գրադարանի հետագա տնօրինման մասին պատգամ թողնել, բայց հաստատ նա էլ նույնը կաներ՝ կնվիրաբերեր Արցախին: «Լավագույնս, որ կարող էի մտածել ու ենթադրել, որ կաներ Լևոն Ասմարյանը գրքերը նվիրաբերել է գրքերը Արցախին: Եթե Լևոն Ասմարյանի գրադարանը, նրա գրքերը թեկուզ մեկ օր մեկ ուսանողի սրտում կայծ վառեն, ուրեմն այդ մարդու կյանքը և գործունեությունը իրար չեն անցել: Դրա խորը հավատով եմ ես զննեցել այս ակցիային», - ասաց Ա. Ասմարյանը:

Համակարգչային մեր դարում գիրքը չի կորցրել իր արժեքը: Համակարգչով, ճիշտ է, կարելի է շատ բան ստանալ, այդ թվում և այն, ինչ ամփոփված են գրքերում, բայց, ինչ խոսք, դրանք այն

Անվանի գրականագետի եղբորորդի Աշոտ Ասմարյանը, որ մտահոգացել է այս նվիրատվությունը, ներկայացրեց դրա շարժառիթը: Ինչն էլ խորհրդանշական այս նվիրատվությունը: Համառոտ ներկայացնելով

ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆ ԿԵՆՍԱԲԱՆԻ ԱՉՔԵՐՈՎ

մեջ կազմվածք, ուսերի ներփոխանություն, ցցվածություն, սրբանային մասի լայնացում, ողերի տեղահանումներ: Սակավաշարժունությունը առաջ է բերում ճարպակալում կամ քաշի ավելացում: Թուլանում է տեսողությունը, լայնանում են բերբերը: Ստեղծաշարի օգտագործումից մատերի շարժունակության խանգարումներ են դիտվում (մոտորիկան նվազում է): Երեխաները դառնում են նեղացկոտ, ինքնամիտ, դյուրագրգիռ, կանակոր, ծածկամիտ, փոխում են խոսակցական լեզուն, հասակակիցների և ծնողների հետ անմիջական շփումը փոխում են համակարգչի «օձնոկլաստիկ»-ի հետ: Նրանց արարքներում նկատվում է կոպտություն և դաժանություն, սկսում են մանապես «վերտուլ» խաղերի հերոսներին: Մեծակ մնալով համակարգչի հետ, նրանք կապ են տեսնում տարբեր տարիքի մարդկանց հետ, ազատ շարադրում են իրենց մտքերը՝ չվախենալով հետևանքներից, ուշադրություն չդարձնելով սխալների, մտքերի շարադրանքի վրա: Չարմանալից այն է, որ նրանք չեն անաչում իրենց սխալներից, մտքերի կրկնությունից և կիսահայերեն-կիսառուսերեն խոսակցականից: Գրում են առանց կետադրական նշանների, երբեմն ուրիշի անվան տակ: Համակարգչից «կշտանալուց» հետո անցնում են հեռախոսային զրույցներին, նկարների քննարկմանը կամ էլ անմակարդակ երաժշտություն լսելուն: Այսքանը տեսնում են ծնողները և քայլեր չեն ձեռնարկում նրանց ետ պահելու:

Եթե մենք ուղղորդենք մեր երեխաներին՝ ճիշտ օգտվելու համակարգչից, կունենանք բանիմաց, գրագետ հերթափոխ: Եթե զերծ մնանք անմատակ մտքեր արտահայտելուց, ու սովորեցնենք նրանց իրենց իրենցից ամաչելուց, կունենանք բարոյական հերթափոխ: Եթե նրանց սովորեցնենք տիրապետել մայրենի լեզվին, գնահատել այն, հպարտանալ մեր մայրենիով, ճիշտ օգտագործել, կունենանք կիրթ սերունդ: Եթե կարողանանք նրանց սովորեցնել չափավոր օգտագործել համակարգիչը, մենք կունենանք ճշտապահ ու ժամանակը գնահատող հերթափոխ:

Եկեք սկսենք հենց այս պահից:

Մարիեթա ՀԱՅՆԱԶԱՐՅԱՆ Իվանյանի միջև. դպրոց

Ս. ԳԱՐՐԻԵՆՅԱՆ

ՇԵՐՈՍՆԵՐԻ ՀԻՇՆԱԿԵ ԱՆՍԱՐ ՊԱՇԵՆ ԷԼ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ Է

«Եթե մեռնել, ապա այնպես, որ մահդ անգամ ծառայի հայրենիքի»:

Գարեգին Նժդեհ

Հենց իր խոսքերով էլ ուզում են բնութագրել այն Մեծ հերոսին, քաղաքական գործչին, քաջ զորավարին, ազգային զաղափարախոսություն կերտած այն հայ մտավորականին, որի ամբողջ կյանքն ու գործունեությունը ծառայել է եղել միմիայն հայրենիքին, անգամ՝ հերոսական մահը:

Մեր պատմության մեջ բավականին հերոսական և ընդօրինակելի էջեր կան, որոնք ուսուցանում և պիտի ուսուցանեն մեր սերունդներին հայրենասիրության վեհ գաղափարները, կերտեն ազգային ոգին, որն այսօրվա երիտասարդությանն առավել քան երբևէ՝ անհրաժեշտ է: Այդ օրինակելի դասերից են հայ ժողովրդի մղած ինքնապաշտպանական մարտերը, որոնցից էր Չանգեզուրի հերոսամարտը՝ մեր պատմության ամենապանծալի ու փառավոր էջերից մեկը, որի շնորհիվ գանգեզուրցի մարտից իր հողին կառչած ու տիրական լինելը: Իհարկե, ժողովրդի ձեռք բերած հաղթանակն էր այն, սակայն այդ հերոսամարտը հաղթական չէր լինի, եթե չլինի Սյունյաց Սպարապետը: Անգնահատելի էր նրա դերը Սյունիքի հերոսական պայքարում: Նա դարձավ հայության համար ազգային գաղափարախոսության խորհրդանիշը: Նրանցից շատ բան ունեն սովորելու այսօրվա հայ քաղաքական գործիչը, զինվորը, զորավարը, ղեկավարը, մտավորականը, և ընդհանրապես, հայ մարդը: Նրա անցած ճանապարհը լուսատու է և ապագայամետ, միակն ու ճշմարիտ ուղին ամբողջ պատմության ընթացքում: Հենց այս ուղին

նախընտրեց 20-րդ դարի վերջին արցախահայությունը, որի ծոցից ծնվեցին նոր Նժդեհներ՝ Վազգեն, Բեկոր, Ավո, Թաթուլ և ուրիշներ: Նորից նժդեհյան խոսքերը մեջբերեն. «Որպեսզի ցեղդ ու հայրենիքդ ապրեն, նրանց համար մեռնելու կամք ունեցիր: Իբրև հայ մարդ անպետք է նա, ով չունի այդ կամքը»: Եվ արցախցին նույնպես այս պատերազմում դրսևորեց այդ կամքը. «Ապստամբ ժողովրդին միայն Աստված կարող է հաղթել: Չի կարող ապրել մի ժողովուրդ, որ գնահատել չգիտեն»:

Արցախը, տխուր ու ողբերգական պիտի լիներ մեր սերնդի ճակատագիրը, եթե վերջին տարիներին մեր կրավորական սպանդի մոտ չունենայինք ընդվզումի մի քանի սրտապնդիչ ու լուսավոր գծեր՝ ցեղի մարտական ոգին ու նրա անկախության խորունկ ծոցումները հայտնակերտող:

Լեռնահայաստանի, ապա և Արցախյան հերոսամարտերն այդ լուսավոր գծերից էին, իսկ Նժդեհն ու նրա արժանի հետնորդները հավերժ կմնան մեր սրտերում ու մտքերում: Իսկ մենք՝ ուսուցիչներս, մեր սերունդներին պարտավոր ենք այդ հայրենասիրության օրինակելի դասերն ուսուցանել և նրանց նույնպես դաստիարակել այդ ոգով, որպեսզի նրանք էլ մեր հերոսներին հավերժացնելու պատասխանատվությունը զգան: Քանզի ինչպես Հովհաննես Իսակովն էր ասում. «Հայրենասիրություն է նաև հայրենիքի համար զոհված հերոսների հիշատակը անմար պահելը»:

Սեդա ՀԱՅՆԱԶԱՐՅԱՆ պարմության ուսուցչուհի Հարությունի 2րդ., գ. Ուկապաձոր

Փնջային մեթոդի ավարտում ՈՒՍՏԱՅՈՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՋՈՒՄ

Վերջերս Հարությունի միջնակարգ դպրոցում կայացավ փնջային մեթոդի ավարտման նիստ, որը ներառում է Ուկապաձորի, Ակնաղբյուրի և Քուրաթաղի դպրոցները:

Մեթոդի ավարտման նախագահ Ա. Արզումանյանը պատասխանատվության մեծ զգացումով է մոտենում այդ աշխատանքներին: Նա լայն տեղ է հատկացնում ընդօրինակման դասերին, զեկուցումներին, միջոցառումներին, մանկավարժական փորձի տարածմանը:

Ուկապաձորի միջնակարգ դպրոցում կազմակերպվել էր երկու ընդօրինակման դաս՝ գրականությունից 9-րդ դասարանում (ուսուցչուհի Ս. Դարայանի մոտ), ՆՁՊ-ից՝ 11-րդ դասարանում (ուսուցիչ Յ. Խաչյանի մոտ):

Գրականության ընդօրինակման դասի թեման Սայաթ-Նովան էր: Երիտասարդ ուսուցչուհի Ս. Դարայանը լավ էր նախապատրաստվել դասին: Նա կարողացել էր անթերի կահավորել դասասենյակը: Մտնելով դասարան՝ բոլորն զգացին սայաթ-Նովան շունչը: Աշակերտներն ակտիվ էին: Ոգևորիչ էր երիտասարդ ուսուցչուհու մանկավարժական եռանդն ու վարպետությունը: Դասը հաջողված էր և ուսանելի:

Քննարկման ժամանակ բոլոր ուսուցիչներն իրենց գիտելուները ու շնորհակալությունը հայտնեցին հագե-

ցած և հետաքրքիր դասի համար:

Հաջողված էր նաև ՆՁՊ-ի դասը: Ուսուցիչ Յ. Խաչյանը լրջորեն է մոտենում իր գործին: Քննարկման ժամանակ ուսուցիչները նշեցին, որ զինդեկն ունի գիտելիքների բավարար պաշար, լավ է տիրապետում իր առարկային: Նրա և սովորողների միջև կա ջերմ և հարգալից վերաբերմունք: Նա անցկացրեց ընդօրինակման դաս՝ պահպանելով դասին ներկայացվող բոլոր պահանջները:

Քննարկումներից հետո պատմության երիտասարդ ուսուցչուհի Ս. Շահնազարյանն անցկացրեց միջոցառում՝ նվիրված Գարեգին Նժդեհին: Այն հայրենասիրական բնույթ էր կրում: Մեկ անգամ ևս ինստատվորվեց ազգային գաղափարախոսության հիմնադիր, մեծ հայրենասեր Գարեգին Նժդեհի կյանքն ու դերը հայ ազատագրական պայքարի գործում: Նման միջոցառումները երկար են մնում մասնակիցների հիշողության մեջ:

Փնջային մեթոդի ավարտման հերթական նիստը Ուկապաձորի միջնակարգ դպրոցում անցավ բարձր մակարդակով:

Գոհար ԱՎԱՆԵՍՅԱՆ Ուկապաձորի միջև. դպրոցի հ. լեզվի եւ գրակ. ուսուցչուհի

ԱԶԳԱՅԻՆ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ԳՈՒՐԳԵՆ ԳԱՐԻԻԵԼՅԱՆԻ ԱՐԱՐՈՂ ՈՉԻՆ

Քո ամպոտ օրվա արեգակն են ես, Արևոտ օրվա ստվերը շոյող... Ես քեզ սիրում եմ Աստծո որդու պես, Դու ինձ մաշո եղիր, իմ հայրեցի՜ հող:

Գ.Գաբրիելյան

Չկա մի հայ երեխա, որ չճանաչի Գուրգեն պապիկին՝ Գաբո Ապրող, Արցախի գրական օջախի նահապետին, մանկագրին, քարոզմանչին, Դարաբաղի մեծ մանկանը (ըստ Շիրազի), երգահանին, հրապարակախոսին ու հասարակական գործչին:

Վարդան Հակոբյանը, խոսելով մեծ բանաստեղծի մասին, գրել է. «Գուրգեն Գաբրիելյանը մանկական պոեզիայում ստեղծել է իր դպրոցը: Նա ժողովրդական գրող է՝ բառի ամենալայն իմաստով: Ազգային բանահյուսության բարձրագույն գոհարների մշակման մեջ էլ բանաստեղծը մեզ ներկայանում է հոգևոր անպառակտելիությամբ մեջ՝ որպես ժողովրդի բոլորամղված գավապ: «Լա՛վն է Գաբո Ապրող, իր հայրենի Արցախի նման պարզ ու միամիտ, բարի ու հյուրասեր: Իսկ ինչքա՛ն հրաշալի երգերի հեղինակ է նա: Ով չգիտի «Դարաբաղի հորովելը», որը բոլորից լավ հենց ինքն էլ երգում էր: Իսկ «երգ միայն լավ մար-

դը ունի, վատ մարդը երգ չունի», գրել է Դավիթ Յովհաննեսը:

Գ. Գաբրիելյանի 45-ից ավելի ժողովածուները մեր ազգային հոգևոր հարստությունն են, երկրի ապագան համարվող փոքրերի համար ստեղծված մեծ գրականության հավերժախոս գանձարաններից մեկը, մեր արցախաշ-



ունչ երգի ծփանքը, որով կարող է հպարտանալ մեր ժողովուրդը:

Գ. Գաբրիելյանը նորագույն շրջանի հայ մանկական գրականության ակամավոր ներկայացուցիչն է: Որպես մանկագիր՝ նա ձևավորվել է 1950-ական թվականներին: Նա ճանաչում ու սիրում էր մանուկների աշխարհը, հասկանում նրանց հոգեբանությունը: Նա և՛ մանկավարժ էր, և՛ մանկագիր: Գ. Գաբրիելյանի բա-

նաստեղծություններում երեխաներին դաստիարակող մեծերն են՝ պապը, տատը, ավագ եղբայրը, քույրը, ապա՝ բնությունը, ծառերը, ծաղիկները...

Գ. Գաբրիելյանի գրական ժառանգությունը մեծ և բարձրարժեք է, ուստի նրա ստեղծագործության հանդեպ եղած հետաքրքրությունը չի սպառվելու:

Գուրգեն Գաբրիելյանի ծննդյան 85-ամյակին նվիրված՝ Ա. Սախարովի անվան հ. 8 ավագ դպրոցում եռուզեռ էր. անց էր կացվում ասմունք-մրցույթ:

Հաղորդավար՝ 11-րդ դասարանի աշակերտուհի Լուսինեն, նշեց, որ արցախյան անկումն ոգին իր բառացի արտացոլումն է գտել ասմունքի միջոցով, և որ հանդիսականներին սպասվում են գաբրիելյանական տաղանդափնջի արտացոլման հրաշալի րոպեներ:

Իրոք, նա չէր սխալվել: Աշակերտների սրտաբուխ արտասանությունը ոգեկոչում էր հայրենա-

սիրություն ու անձնվիրություն, բարություն ու պարզություն, սեփական արժեքները գնահատելու կարողություն:

Անաչառ հանձնախումբը դժվարությամբ ընտրեց հաղթողներին. առաջին տեղ գրավեց հինգերորդ դասարանցի Տիգրան Շամիրյանը՝ «Բեղավորներն ու մեղավորները» բանաստեղծությամբ, 2-րդ տեղը՝ հինգերորդցի Դիանա Գարաբյանը՝ «Քոչարի» բանաստեղծությամբ, 3-րդ տեղը՝ վեցերորդցի Յերմինե Սայիանը՝ «Հըրսընքեն կընանեքը» բանաստեղծությամբ:

Երկրորդ տարիքային խմբում 1-ին տեղ գրավեց 11-րդցի Լարիսա Պողոսյանը՝ «Ինձ ուրիշ է», 2-րդ տեղը՝ 10-րդցի Անահիտ Պողոսյանը՝ «Երբ ես տեսնում եմ», 3-րդ տեղը՝ 10-րդցի Անի Սայիանը՝ «Միայն քեզ համար» բանաստեղծություններով: Գ. Գաբրիելյանի արարող ոգին ճախրում է հոգևոր Արցախի երկնականարում, երգի փոխված թևաբախում՝ մանուկների շուրթերին հնչեցնելով «Երգող ծառը», «Աշուն հանդեսը», «Աքրուրականչը», «Դարաբաղի հորովելը»...

Սյրեհ. Ա. Սախարովի անվ. հ. 8 ավագ դպրոցի հ. լեզվի եվ գրակ. ուսուցչուհի

Շնորհավորանք ԿՅԱՆԷ՝ ԼԵՑՈՒՆ ԻՄԱՍՈՎ



Ծառն արմատով է հզորանում, Ուսուցիչն՝ իր սաներով:

Հավատա՞նք, որ կենսուրախ ու եռանդով լեցուն այս կինն արդեն 60 տարեկան է: Նրա կյանքի օրերն ու տարիները սահել են աննկատ՝ մազերին մաղելով ճերմակ փաթիկներ, իսկ ապրած տարիների հետագիծը լուսավոր է ու բյուրեղյալ...

Նա երջանիկ է, որովհետև իր անցած տարիների շքերթում տեսնում է մանկական հոգիներին ընծայած իր սրտի թրթռումներն ու հոգու երանգները: Երջանիկ է, որովհետև մեծ սիրով ու հոգատարությամբ փոքրիկների սրտերում ներարկում է ազնվության ու հայրենասիրության անմար կաթիկներ:

Ռոզա Սայիանը ծնվել է 1953թ. փետրվարի 16-ին, Մարտունու շրջանի Կաղարծի գյուղում: Կաղարծու միջնակարգ դպրոցի առաջին դասարան է հաճախել 1960թ., իսկ 1970-ին դարձել է նույն դպրոցի շրջանավարտ: Նույն թվականին ընդունվել է Շուշի քաղաքի մանկավարժական ուսումնարանը և ավարտել այն 1973թ.՝ ստանալով կարմիր դիպլոմ: 1973-1974 ուստարում աշխատանքի է անցել Պառավաթումբի տարրական դպրոցում՝ որպես դպրոցի վարիչ և դասավար: Վերոհիշյալ ուստարվանից սկսվել է նրա մանկավարժական կենսագրությունը, որն էլ շարունակվում է առայսօր:

Չափազանցված չի լինի, եթե ասենք, որ Ռ. Սայիանը ոչ միայն մանկավարժ, այլև հոգեբան է: Նա մանկական հոգիների ճշգրիտ թարգման է...

Չէշտ չէ դասավար լինելը: Դասավարը պետք է մանկանալ իմանա, որպեսզի հասկանա վեց տարեկանին: Իսկ Ռ. Սայիանին հաջողվում է հասկանալ ու պաշտել այդ անմեղ եակներին: Նա իր կյանքի իմաստը գտնում է սովորեցնելու, սաներին գիտելիքներով, ինքնուրույն մտածողությամբ զինելու մեջ:

Փորձառու մանկավարժը գտել է մանկական հոգիների բանալին, ինքն էլ մասնակցել նրանց հետ ու նվաճել թե՛ իր սաների, թե՛ նրանց ծնողների և թե՛ հասարակության հարգանքն ու համակրանքը:

Նա ամեն անգամ նոր վարպետությամբ է սովորեցնում իր սաներին մտերմության ոսկեղենիկ գրերը և աշխատում է այդ գրերը զենք դարձնել նրանց ձեռքերում՝ հաղթահարելու ճակատագրի մատուցած դժվարությունները, հպարտ քայլելու կյանքի տատակոտ ճանապարհներով...

Ահա թե ինչու բազում շրջանավարտներ երախտագիտությամբ են մտաբերում իրենց տառուսույց Ռոզա Սայիանին, զգում նրա տված խորհուրդների իմաստությունը, ցուցաբերում մարդկային լավագույն հատկանիշներ...

Այո, իմաստավորված է նրա կյանքը, քանզի նա բարի, ազնիվ, մարդկային լավագույն արժանիքներով օժտված մանկավարժ է:

Սրտանց շնորհավորում ենք մեր գործընկերոջը՝ Ռ. Սայիանին, ցանկանում մանկավարժական եռանդի կրկնապատկում՝ դժվարին, բայց շնորհակալ աշխատանքում: Նրան մաղթում ենք քաջամոռություն, հաջողություններ կյանքում, հոգու խաղաղություն՝ հանուն մատաղ սերնդի կրթության և դաստիարակության:

Սիրով՝ Կաղարծու և Պառավաթումբի ուսուցչական կոլեկտիվ

ԱՎԱՆՊՈՒՅԹԻ ՎԵՐԱԿԱՆԳԵՄԱՆ ՀԱՅՈՂՎԱԾ ԲԱՅԼ

Գիտատեխնիկական զարգացման արդի շրջանում, երբ ազգային ու ավանդականի հարցը մի տեսակ դրված է «լինել-չլինելու» խնդրի առաջ, երբ ամեն առիթով նախընտրությունը տրվում է եվրոպական նորամուծություններին, խիստ անհրաժեշտություն է առաջանում պահպանել հին ու ավանդականը, շարունակել ու պահպանել օրեցօր խամրող դեմքն ու դիմագիծը:

Ազգային ավանդույթների ու սովորույթների պահպանման հարցով խիստ մտահոգվում են նաև Սոսի միջնակարգ դպրոցի ուսուցիչները և ամեն ջանք գործադրում են՝ դպրոցականների մեջ սերմանելու քրիստոնեական կյանքի մաս կազմող բարեպաշտական բազմաթիվ սովորույթներ, որոնք խորհրդային կարգերի օրոք մոռացության էին մատուցվել:

Հայտնի է, որ Մեծ Պահքին նախորդող օրը քրիստոնյա հայերը մշակ են իրենց հաճելի ու սիրելի տոներից մեկը՝ Բարեկենդանը:

Բարեկենդանը խորհրդանշում է Ադամի և Եվայի դրախտային կյանքը՝ լի բերկրանքով ու վայելքներով:

«Բարեկենդան» բառը կազմված է «բարի» և «կենդանություն» բառերից և գրաբարում մշակակալ է ուրախություն: Այն տևում է մեկ օր՝ Մեծ Պահքին նախորդող օրը: Դա պարերի, խաղերի, այցելությունների, հրապարակային խնջույքների, կերուխումի, կատակների, ուրախության մեկ օր է, իսկ հաջորդ օրվանից սկսվում է Մեծ Պահքը: Բարեկենդանին մարդիկ իրար հյուր են գնում կամ ամբողջ ընտանիքով հավաքվում տոնական սեղանների մոտ և ուրախանում: Այս տոնի գլխավոր ուսուցիչը յուրով փչավն է:

Այս տարի Բարեկենդանը մշակվեց փետրվարի իննին, որի առիթով հետաքրքիր միջոցառում կազմակերպվեց Սոսի Գ. Հակոբյանի անվան միջնակարգ դպրոցում. հնարավորինս ձգտում էին պահպանել տոնի հատուկ բոլոր խորհրդանիշները՝ այն ըմբռնելով և արժևորելով լիարժեքորեն:

Միջոցառումը կազմակերպեցին 6-րդ դասարանի աշակերտները՝ Հայ եկեղեցու պատմություն առարկայի ուսուցչուհի Մելանյա Ալեքսանյանի գլխավորությամբ: Այն ոչ միայն հնարավորություն դարձավ լիքաբափվելու, մի պահ առօրյա հոգսերից կտրվելու, հիանա-

լու ապագա սերնդի տաղանդով ու խելացիությամբ, այլ որ ամենազվազված է՝ պատմության խորքերից հանելու, վերակենդանացնելու և ժողովրդին ի տես դարձնելու լավագույն ավանդական տոներից մեկը:

Ձուռնա-դիուլի հնչյունների ներքո պարելով՝ բեմ բարձրացան միջոցառման մասնակից աշակերտները:

Միջոցառումը բաղկացած էր մի քանի մատերից: Նախ երեխաները խորությամբ և բազմակողմանի ներկայացրին տոնի էությունն ու յուրահատկությունը, արտասանեցին բանաստեղծություններ, որտեղ դարձյալ երևում է Աստծո ամենագոր ուժը՝ չարից ու խավարից ազատվելու:

Աստված՝ արարող, բարեգութ, ներող, Օրհնված Աջո գլխներին պահիր, Հույս, հավատ տուր մեզ, պահպանիր չարից,

Բավ՝ է խավարը իշխի մեր հոգուն:

Հանդիսատեսին մեծ ոգևորություն և ուրախություն պատճառեց հատկապես ազգային ու ժողովրդական երգերի, պարերի ցուցադրությունը, որ երեխաները կատարում էին՝ իրենց մեջ ունենալով հաստատապես արմատավորված հայրենասիրական ոգի: Միջոցառումների այս մասում միշտ օգնության է հասնում երաժշտության ուսուցիչ ընկեր Բաղդասարը, ով ցանկացած հարցում ձեռք է մեկնում գործընկերներին:

Բոլորի վրա մեծ տպավորություն թողեց հատկապես Հովի. Թումանյանի «Բարեկենդանը» հեքիաթի բեմադրությունը՝ նախօրոք մի քանի նախադասությամբ պարզաբանելով, թե այդ ինչ յուր ու բրինձ էր, և ինչու էր տանտերն այն բերել՝ ասելով, թե Բարեկենդանի համար է: Տանտիրուհին չէր խաբվի և այդպիսի տխուր ու ծիծաղելի վիճակի մեջ չէր ընկնի, եթե իմանար տոնի մասին:

Կնոջ և ամուսնու կերպարներում հայտնված փոքրիկ հերոսները (Գերմանն ու ժենյան) իրենց հագուկապով, դերասանական տաղանդով ու խոսքով պարզապես զարմանք ու հիացմունք պատճառեցին հանդիսականներին և արժանացան նրանց ծափահարություններին ու գովեստին:

Միջոցառման կարևոր մաս էին կազմում նաև ազգային ավանդական խաղերը՝ մրցույ-

թի տեսքով, որոնց հաղթողները պետք է պարգևատրվեին: Ինչպես միշտ, մրցավարն էր ֆիզկուլտուրայի ուսուցիչ Ղ. Ախարյանը: «Աքրուրականչ» և «Պարանի ձգում» խաղերին մեծ ոգևորությամբ ու հաճությամբ մասնակցեցին ինչպես միջոցառման «հերոսները», այնպես էլ բարձր դասարանների աշակերտները՝ ամեն կերպ ջանալով արժանանալ հաղթողի կոչանքին:

Իսկ վերջում սպասվում էր ամենամեծ անակնկալը: Ուսույն տատը ներկաներին բաժանեց տոնի հատուկ ուտելիքը՝ փլավը՝ հայկական ավանդական սուրբ լավաշի հետ միասին:

Իմ թոռնիկներ, խելոք ու լավ, Հինա բերեն տաք-տաք փլավ, Անուշ արթե հատ-հատ ու լավ, Հենց ձեր սիրած չամչով փլավ:

Ձուռնան ու դիուլը, երգն ու պարը շարունակվում էին, փոքրիկ միջոցառումը վերածվում է իսկական տոնի: Մեր առջև կենդանանում է այն Բարեկենդանը, որի մասին գիտեինք զրբերից: Ձգացինք, որ մենք ազգային ավանդույթների և սովորույթների սով ենք զգում: Այս մի կաթիլ միջոցառումը փոքր-ինչ հագեցրեց մեր այդ քաղցը: Ձգացինք, որ դա մերն է՝ քրիստոնյա հայերինս, որ եկել է դարերից մեր լեզվի ու հավատի հետ, և ինչքան էլ առաջ գնանք՝ հայացքներս եվրոպաներին հառած, դարձյալ ու դարձյալ պիտի պաշտպանենք, պահպանենք ու շարունակենք ազգային ու ավանդականը: Բարեկենդանը այդպիսի միջոցառումներից առաջինը չէր, հանդաված կարող ենք ասել, որ վերջինն էլ չի լինելու, այլ կլինի շարունակական...

Ոչինչ չէր մնում անելու, քան ընկեր Ալեքսանյանին մեր շնորհակալությունն ու երախտագիտությունը հայտնելու՝ այդպիսի հոգեպարար միջոցառմամբ ազգային վերականգնման գործի մեջ իր, թեկուզ փոքր, ներդրումն ունենալու համար: Հիրավի, դա մի օրինակ էր հասարակությանը ևս մեկ քայլով եկեղեցուն մոտեցնելու գործում:

Էմիլյա ՄԱՆԱՍՅԱՆ
ԱրՊՀ հայ գրականության եւ բանասիրության ֆակուլտետ, մագիստրատուրա, 1-ին կուրս

ՏԵՐ, ԶՈՐԱՅՐՈՒՄ ԵՐԿԻՐԱ ԱՅՍ

Երկինքը սպիտակ-սպիտակ էր, լցված ծյան խոշոր փաթիլներով, որոնք այնպես էր դանդաղ էին իջնում, ասես մտածում էին՝ իջնե՞ն, թե չէ...

1988թ. փետրվարն էր: Գրապարակը լեփ-լեցուն ցուցարարներով: Այնտեղ էի շտապում և ես: Չյունը այնպես էր ճռճուռու ուղեղի տակ, իսկ աչքերին դեմ ոչինչ չէր երևում: Դեմքիս վրա հալչում էին ծյան փաթիլները և ջուր դարձած՝ լցվում ներս: Գրապարակից լսվում էին վանկարկումներ՝ «Լեհին, Պարտիա, Գորբաչով»: Ես խորը երեկոյան «Ամերիկայի ծայր» ռադիոալիքով Պարտիա Գորբաչովին էի լսել, որի կարծիքով Արցախի հարցը կլուծվեր, եթե Հայաստանը դուրս գար Խորհրդային Միության կազմից: Լսել էի, ու թվացել էր, թե այդ մարդը խենթացել է, ինչպես թե դուրս գա Խորհրդային Միության կազմից, մենք առանց Մոսկվայի ի՞նչ ենք: Պարզապես ոչինչ: Մտքումս կոծվա էի տալիս Պարտիայի հետ ու գլուխս կախած՝ քայլում: Երբ հասա հրապարակին, հանկարծակիի եկա: Գրապարակը շրջապատել էին խորհրդայինները՝ զորքերը և արգելում էին մոտենալ: Դեմքիս վրա հալչում էին մոտենում մեր թաղի Անիշկա բաբոյին, որը մի դուլը ձեռքին, փորձում էր անցնել, բայց զինվորները չէին թողնում: Ինձ տեսնելով՝ բացատրում էին. - Ի՞նչ եք: Գրապարակն էր սպիտակ, մատաղ ինձ, մեր բուսական կարտոշկան: Մեկ խեղճերը սառալ ըն, տաք-տաք տան ուրանց, օտին:

Փորձում եմ համոզել զինվորներին, չի լինում: Ակամայից նորից հիշում եմ Պարտիա Գորբաչովին: Իսկ եթե ճիշտ է ասո՞ւմ: Անիշկա բաբոյի ձեռքից վերցնում եմ դուլը և շրջանցելով հրապարակը՝ ներքևից մտնում ներս: Մարդիկ, առանց ուշադրություն դարձնելու զինվորներին, գոռում են՝ «Լեհին, Պարտիա, Գորբաչով», իսկ Անիշկա բաբոյն բացում է դուլի բերանը, և խաշած կարտոֆիլի ախորժեղի հոտը տարածվում է ամենուր: Մարդիկ մեկը մեկին առաջարկելով՝ բաժանում են կարտոֆիլը և դատարկ դուլը տալիս Անիշկա բաբոյին: Մոտենում եմ ակտիվիստներից մեկին և հարցնում.

- Երեկ լսեցի՞ր Պարտիա Գորբաչովին:

- Ցնո՞ւմ եմ և, բանի տեղ մի դիր. լինում է պատասխանը

Երջում եմ մարդկանց մեջ, գիտնալ խառնաշփոթ է: Ի՞նչ է դուրս գալիս, խորհրդային այս ամենը մարդկանց շրջապատել են խորհրդային զորքերը: Ինչո՞ւ, ո՞ւմ ցուցումով, արդյո՞ք ոչ Գորբաչովի: Կասկածի որոշ կրծում է հոգիս, Խորհրդային Միությունը կարծես հեղինակազրկվում է աչքիս: Վախենում եմ կարծիքս հայտնեմ, մարդիկ ամենացորդ հավատում են երկրի ղեկավարին և ինձ հաստատ չեն հավատա, նույնիսկ «պրովոկատոր» կորակեն:

Ամբողջ ելույթ է ունենում ժողովրդական արտիստ Բենիկ Օվչյանը: Պաշտում եմ այդ սպիտակափառ նահապետին: Ես վիրավորված է երկրից ու նրա դեկավարից: Թթվածնի հոսանք է գալիս դեպի ինձ, և ես թեթևացած շունչ եմ քաշում: Չէ, Արցախին մեծ հիասթափություն է սպասվում և պայքարի ձև կտրուկ փոփոխություն:

Չյունը տեղում է անխնայ, սպիտակ խոշոր փաթիլները նստում են մարդկանց բաց գլուխների վրա, նրանց մինչև վերջ բացած հոգիների վրա: Ու ինձ թվում է, թե այն գալիս է Կրեմլից, ոչ թե երկնքից: Աստված իմ, գարունը ե՞րբ կգա:

Գարունը եկավ, իհարկե, բայց մինչ այդ սունգայիթ եղավ, որը ոչ մի առողջ մարդու բանականության մեջ երբևէ տեղ չի գտնի: Մարդիկ սկզբում շշուկով խոսեցին, հետո բարձրաձայնեցին: Հարևանիս տունը ողբ էր, չէի համարձակվում գնալ, մի տեսակ մեղավոր էի զգում: Ինձ պարտադրեցի ու գնացի: Տարեց կինը երբ ինձ տեսավ, ցատկահարեց գոչեց.

- Էղ էի՞ք ուզում, հա՛, էղ էիք ուզո՞ւմ...

Լալվել էի, ինչ ասեի, ցավը մեծ էր...

Գնում եմ հրապարակ, այնտեղ, որտեղ թեթևանում է սիրտս, հոգիս, որովհետև մարդիկ փոխվել են, էլ սպասելիք չունեն Կրեմլից: «Պաքար» բառը մտել է նրանց կոչերի մեջ՝ բերելով իր հետ «գեներ», «զինվել», «կռվել» պարզաբանումները: Քաղաքը լց-

վել է Սունգայիթից եկած փախստականներով, որոնց հետո պետք է ավելանային Շուշվա հայերը, հետո... Հետո-ն փական էր, որ դրվեց լեզվիս վրա ու մնաց մինչև 1994 թվականի մայիսը:

Հետո-ն իրար հետևից ընդունվող մեր որոշումներն էին, զինվոր ջոկատներն էին, Շուշվի բերդում տանջամահ արվող ազգի ընտրյալներն էին, «Օղակ» օպերացիան էր և գիշերային որսի դուրս եկող Սաֆոնով, Պոլյանիչկո գիշատիչները: Հետո-ն քաղաքի ռմբակոծումն էր և բազում հերոսական տղամերի զոհաբերումը: Հետո-ն պատերազմ էր, սկզբից անհաղթելի ոգու, հետո զենքի ու զորքի իսկական պատերազմ, պատերազմ երկրի գոյի, քրիստոնեական հավատքի ու խաչի: Հետո-ն հաղթանակ էր ու ազատություն, անկախություն ու խաղաղություն: Հետո-ն բանակ էր անպարտելի ու կոթողներ հերոսների: Այս էր հետո-ն՝ փականն ու կապը իմ լեզվի, որ բացվեց Լաչինի միջանցքի հետ ու աղոթեց-աղոթեց գիշեր-ցերեկ ու աղոթում է իմնա էլ.

- Տեր, պահիր-պահպանիր երկիրս ու ժողովուրդս այս հպարտ, բանակը նրա արդար ու երկինքը նրա խաղաղ: Տեր, զորացրու երկիրս այս ու անելիքը նրա, այժմ և միշտ, և հավիտենա հավիտենից, ամեն:

ԱՆՆԱ ԱՅՎԱԶՅԱՆ

ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Անկախություն, Մաղաքից խլած պատրանք, Սև ոսկու սև առուժախից խլված երագ... Գանձասարի արծվանիստ Սուրբ գմբեթին Արցախալույս ոսկեթև խաչ... Կռունկ հույսի՝ ...Ինչի՞ց սկսեմ և որտեղի՞ց: Ուսթունութի փետրվարի՞ց, Թե 1966 ազեր թուրքի Սև թաթերով գազանաբար խեղված փոքրիկ հայ սանիկի Աղիողորմ ճիչ-հառաչից... Մի՞թե նրա գլխին խփված ժանգոտ մեխը Դեռ չի խոցել խիղճն աշխարհի... Ուսթունութին սիրտ ու ձեռքեր Սեղմված իրար՝ Բռունցքվեցին հանուն ազգի, Արդարության և հավատի: Իմ հայոց ազգ, դու ուխտավոր Անախության ճանապարհին: Թող, որ մի օր սրտով տոնես Աշխարհակալ վախկոտների կարունելից Փրկված, անահ ու ճանաչված Լուսաբացող ազատության... Օ՛ թշնամի եղե՛նազործ Մի ողջ ազգի երկինք պարզված Մեծ պահանջին Դու պատասխան տվիր հարված Սունգայիթով, Բաքվով տմարդ. Ինչքա՛ն հայեր ողջակիզվեցին Սարդուստայնում քո նախաբեր... Անկախություն, Մեր գավակաց արյան գնով Հայոց ազգի փրկված պարծանք, Հայոց բանակ, Հայրենիքի սահմանի մոտ Կանգնած արի երկրապահ: Աչք չթարթես, Չոհվածի մոտ թեզ վստահված Ինքնաձիգը ամուր սեղմիր Քո բազկի մեջ Եվ անառիկ պահիր «ամրոց-Ռարաբաղը», Իսկ ով ձգտի վաճառքի մեջ Պղծել թափված զինը արյան Մարտիրոսված հայ գավակաց, Աստված վկա, մի օր կտա Նա պատասխան Տիրոջ դատին... Անկախություն, դու փորձության Միջով անցնող հայ ֆիդայի, Մեծ Նժդեհի, Անդրանիկի կարոտ անափ, Արի գիրկն իմ, ես՝ քո մայրը, Դու՛ իմ որդին... Եվ հավատով միաձուլվե՛նք, Քանզի կյանքում Միասին ենք կրել խաչը Եվ չենք լքել իրար երբեք... Երկաշարժի մոխիրներից Դու արարված ազատատենչ Փյունիկ թռչուն, Թևերդ բաց, ճախիրդ ազատ, Կտցիդ նամակը հայոց հույսի... Դու՛ եղեգան փողից ելած Ազատության իրեղեն լույս, Հայկյան մետի սլացքով ես Դու մխրձվել գարշապարը ժամանակի... Անկախություն, Արարատի սուրբ գազաթին կանգնած Նավից Նոյին կյանքի մեծ լուր բերող Դու աղավնի, Թող երկինքը Դարեր ի վեր խաղաղ լինի...

Ձյա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՂԹՈՒՄ ԵՆՔ ՆԱԵՎ ԵՐԳՈՎ

Արցախյան շարժան 25-ամյակին, Հայրենյաց պաշտպանի օրվան և Ջորալար Անդրանիկի ծննդյան տարեդարձին նվիրված՝ կազմակերպվեց Հայրենասիրական երգերի փառատոն, որը նախաձեռնել էր Ստեփանակերտի քաղաքապետարանի մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության բաժնի ընդգրկելով մայրաքաղաքի հանրակրթական դպրոցներին: Բաժնի պետ Լուսինա Հակոբջանյանի խոսքով՝ ծրագիրը դպրոցներին ներկայացվել էր դեռևս ուսումնական տարեսկզբին, և նրանք պատրաստվել են հավուր պատշաճի: Փառատոնը լեփ-լեցուն դահլիճ էր հավաքել Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում: Անցյալ տարի անցկացված փառատոնը բարի հուշեր էր թողել մասնակիցների հոգում:

Չյունը տեղում է անխնայ, սպիտակ խոշոր փաթիլները նստում են մարդկանց բաց գլուխների վրա, նրանց մինչև վերջ բացած հոգիների վրա: Ու ինձ թվում է, թե այն գալիս է Կրեմլից, ոչ թե երկնքից: Աստված իմ, գարունը ե՞րբ կգա:



մեծ ճաշակով: Հնչեցին ֆիդայական, հայրենիքին, Հայոց բանակին ու մեր աքջարի զինվորներին նվիրված երգեր: «Ձարթիր, լառ, մըռնիմ քըզի» (Ավ. Իսահակյանի անվան հ. 10), «Հայոց բանակ» (Հովհ. Թումանյանի անվան հ. 9), «Տղաների երգը» (հ. 4), «Փառքը շատ, Տեր Աստված» (հ. 6) «Փառք մեր ազգության» (Խ. Աբովյանի անվան հ. 1), «Երագ իմ, երկիր հայրենի» (Վ. Ջահանգիրյանի անվան հ. 11), «Քեզ ինչպես կանչեմ» (Չարենցի անվան հ. 7), ազգագրական երգ-պար (հ.

5), «Տեսնեմ Անին ու մոր մեռնիմ» (Ա. Սախարովի անվան հ. 8), «Հայաստան» (Ա. Ղուլյանի անվան հ. 2) դպրոցների աշակերտների կատարումների մեծ ոգի փոխանցվեց հանդիսատեսին:

Վերջում բոլոր մասնակիցները միասին կատարեցին Մ. Հայ-

զգացումները, որ ուղեկցեցին երեխաներին: «Երեխաների աչքերի փայլից զգացվում էր նրանց հոգին: Նման միջոցառումները երեխային օգնում են ծանոթանալու հայոց պատմությանը», - ասաց Լ. Բարսեղյանը:

Փառատոնի արդյունքներով ք ա ղ ա ք ա պ ե տ ա թ ա ն ի համապատասխան դիպլոմներով պարգևատրվեցին հ. 2, 1, 4 դպրոցները: Անվանակարգերը շահեցին Էռնա Միրզոյանը (հ. 8 դպրոց, «Լավագույն ծայր»), Անդրանիկ Վերդյանը (հ. 10 դպրոց, «Հանձնախմբի հանակրանք»), հ. 4 դպրոցը («Լավագույն բեմադրություն», ղեկավար՝ Ա. Գաբուլյան):

Հիրավի, երգն օգնում է ապրել, արարել և հաղթել: Հայ երգը գնդեր է տարել մարտերի և հաղթություն պարգևել: Այսօր էլ այն շարունակում է իր առաքելությունը:

Սեփ. Լրատվություն ՈՒՂՈՒՄ

«Լուսարարի» ճախորդ համարի 9-րդ էջի լուսանկարի տակ «Մնացականյան» ազգանվան փոխարեն կարդալ՝ «Պետրոսյան»:

1-ին էջի լուսանկարների տակ դուրս է մնացել հեղինակի անունը՝ Վալերի ԴԵՏՈՒՅԱՆ:

10-րդ էջի առաջին սյունի հոդվածում ներքևից 7-րդ տողում «փետրվարի 7»-ի փոխարեն կարդալ՝ «փետրվարի 19»: Հայցում ենք ընթերցողի ներողամտությունը:

Հ Ա Ր Ց Ա Ր Ա Ր
Խմբագիր՝
ՍԿԵՏԼԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ

Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99,
E-mail: gorctert@mail.ru

Մեջբերումների և փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Տպագրական՝ 3171: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 09.02.2013թ.: